Երուսաղէմի պատրիարք կ'ընտրուի, բայց կը հրաժարի. իր օրով է որ 1823ին Ս. Յակոբի վանքի վարչութեան համար 16 յօդուածներէ բաղկացեալ կանոնագիր մը կը շինուի. նոյն տարին կը հրաժարի պատրիարքական պաշտօնէն և կ'առանձնանայ Սկիւտարի վանքը. 1824ին կ'որոշուի իբր ծայրագոյն կառավարիչ Ս. Յակոբի վանքին և 1825ին Եգիպտոսի ճամբով կը հասնի Երուսաղէմ. ներքին խնդիրները և պարտուց վճարման գործը ուսումնասիրելէ վերջ՝ խորհրդակցութեան համար կը դառնայ Պոլիս. 1828ին դարձեալ Երուսաղէմ կուգայ նոյն պաշտօնով, որ ժամանակ կը յաջողի վճարել Ս. Յակոբի վանքի 800,000 ղրշի. պարտքը. այս մասին ընդարձակ տեղեկութեան համար տեսնել (Ժպկ. Բ. Հատ. էջ 429 և այլն. նաև ՄՁ. թ. 16)։ Պօղոս պտրք.ի երկասիրութիւններն են հետևեալները. Պատմութիւն անցից որ եղեւ ի Կ. Պոլիս (տպ. 1818). Թանգարան խրատու (Ա. և Բ. հատ. տպ. Օրթագիւղ, 1824). Զանազանութիւն հինգ դարուց. երեք հատ. (պէշ տէհր Ֆէրզի) (Բ. տպ. Երուսաղէմ, 1849)։

Ունի նաև անտիպ աշխատութիւններ, ինչպէս Բուրսասան Ս. Երիրի, զոր յօրինած է 1798ին, Պետրոս պտրք.ի խնդրանքովը, ինչպէս յայտնի է ձեռագիրին ընծայականէն, և զոր 1839ին իսկականէն ընդօրինակած է Դաւիթ եպս. Կարնեցի. Հերոնիմոս Պենետիկտեան կրօնաւորին Անտառ պղաբանութեան գիրքն ալ թարգմանած է և համառօտած է Խարբերդցի Ղուկաս վրդ.ի թարգմանած Կուռնելիոս Վէմեանի (a Lapide) Մեկն. հինգ գրոցն Մովսէսի երկասիրութիւնը. ընդօրինակութեամբ Վանանդեցի Յովհաննէս Միրզայեանի, որմէ ընդօրինակած է 1828ին Սեանի միաբան Անտոն աբ. (Գեղարունի. էջ 404—5)։ Պօղոս պտրք. կը վախճանի 1853ին և կը թաղուի Ս. Փրկչի վանքը. պատրիարքներու շարքին մէջ. իր տապանագիրն է հետևեալը.

«Այս է տապան հանգստեան Պօղոս Ս. Արքեպիսկոպոսի Անդրիանուպոլսեցւոյ, նախկին պատրիարքի Կ. Պոլսոյ և Ս. Աթոռոյս հարազատ և բազմաշխատ միաբանի, որ ի հասակի իննսունամեայ հանգեաւ ի Տէր. յամի 1853 ի 5 Մայիսի»։

ՊՕՂՈՍ ՍՐԿ. ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.— Աշկ. Գրիգոր պատուելի Փէշտիմալճեանի (✻1837), քարտուղար Ս. Յակոբի վանքին,